

41 Եւ դարձան հանդերձ թղթովք, եւ եկեալ հանդիպէին սրբոյն Սահակայ, եւ զաւրավարին Անատոլեայ: 42 Որոց ընկալեալ զթուղթս եւ զհրամանս, յոյժ ուրախ եղէն եւ փառաւորութիւն ամենեցուն տեսառն եւ Աստուծոյ հատուցին: 43 Եւ փութայր վաղվաղակի զհրամանսն կատարել եւ առաքէ ի գաւառս եւ ի քաղաքս հայոց որ ընդ իշխանութեամբն կայսեր, ժողովեալ բազմութիւն մանկտոյ ի տեղիս տեղիս, եւ դարմանս եւ ռոճիկս կարգեր յարքունուստ, որպէս զի անգբազապէս ուսցին. զորս եւ երանելին Մեսրոպ զլուսաւոր վարդապետութեանն ի գործ արկեալ զժողովեալ մանկանսն ուսուցանէր զնշանագիրն. եւ վարդապետս կացուցանէր յիւրոյ աշակերտացն, զի առ փոքր փոքր զնոսա ի կատարումն ուսմանն ածիցեն:

44 Յետ այնորիկ ձեռն արկաներ զժպիրի եւ զկամաւոր աղանդն Բորբորիանոսացն քննել եւ որք ոչն գային յուղղութիւն հաւանական բանին՝ սաստկագոյն խոշտանկանաւք պատուհասէին ի բանդ եւ ի կապանս, եւ յայդ ինչ տանջանարանս. իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն խայտառականաւք հալածէին յաշխարհէ:

45 Իսկ երանելին զիւր վարդապետութեանն պայման արարեալ, սկսեալ եւ վճարեալ, եւ բազում շնորհագիր մատենաս զհարց եկեղեցւոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն խորութիւնն եւ լցեալ զեղոյր զամենեքումք ի բնակիչս աշխարհին հոգեւոր վայելչութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: 46 Եւ յանձն արարեալ զամենեսեան ամենապահ շնորհացն Աստուծոյ՝ ինքն դառնայր ի կողմանս Յայոց, եւ շրջեր զամենեքումք, հաստատեր զաշակերտեալսն ի ճշմարտութեանն հաւատսն: 47 Եւ եկեալ հանդիպէր սրբոյն Սահակայ, եւ պատմեալ զեղեալսն առ ի նմանէ, ի միաբան արհնեցին զԱստուած ի վերայ նորոգատուր պարգեւացն տուելոց նոցա ի վերուստ:

48 Յետ այսորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն զիւրեանց ազգի զդպրութիւնն առատացուցանել եւ առաւելուլ՝ ի թարգմանել եւ ի գրել ըստ յաջողելոյն Աստուծոյ: 49 Վասն որոյ առաքեն երկուս յաշակերտացն ի քաղաքն Եդեսեայ զԵզնիկ եւ զՅովսէփ, զի յԱսորի բարբառոյն զսուրբ զիրս նոր թարգմանեսցեն ի Յայ լեզու, եւ գրող վաւանդեսցեն իւրեանց աշխարհիս: 50 Իսկ նոքա եկեալ կատարեցին զհրամայեալսն, եւ ի ձեռն հաւատարիմ եղբարց առ պատուական հարս իւրեանց առաքեցին զգրեանն. եւ ինքեանք անցեալ զնացին ի կողմանըս Յունաց ի քաղաքն Բիւզանտիոն յուսումն իմաստասիրութեան. որ եւ ուսեալ եւ տեղակացեալք՝ թարգմանիչք եղեալք ըստ հեղդենականի լեզուին:

51 Ապա յետ ժամանակի ընչ ընդ մեջ անցանելոյ, դէպ լինէր եղբարց ումանց ի Յայաստան աշխարհէս, երթալ ի կողմանս Յունաց՝ ի քաղաքն Կոս-